ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 1

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետարանում **10.02.2015թ** տեղի ունեցած մարզխորհրդի նիստի

Մասնակցում էին

Ա.Երիցյան **ՀՀ ՏԿԱԻ նախարար**
Ս.Սահակյան **ՀՀ Արագածոտնի մարզպետ**
Կ.Իսախանյան **ՀՀ ՏԿԱԻ փոխնախարար**
Հ.Մխիթարյան **ՀՀ ՏԿԱԻ փոխնախարար**
Դ.Կարապետյան **ՀՀ ՏԿԱԻ փոխնախարար**
Գ.Գրիգորյան **ՀՀ ոստիկանության մարզային վարչության պետ**
Ս.Ազարյան **ՀՀ ՏԿԱԻ նախարարության փրկարար ծառայության տնօրեն, գեներալ-լեյտենանտ**
Ն.Գրիգորյան **ՀՀ ՏԿԱԻ նախարարության փրկարար ծառայության տնօրենի տեղակալ, գեներալ-մայոր**
Ն. Մովսիսյան **մարզպետի տեղակալ**
Մ Աբգարյան **մարզպետի տեղակալ**
Հ.Գևորգյան **մարզպետարանի աշխատակազմի ղեկավար**
ՀՀ Արագածոտնի մարզի համայնքների ղեկավարներ
ՀՀ Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարներ
Հ.Գալստյան **ՀՀ ՏԿԱԻՆ վարչության պետ**
Ծ.Վարդանյան **ՀՀ առողջապահության նախարարության բժշկական օգնության քաղաքականության պետ**
Ա.Մանուկյան **ՀՀ ԱԻՆ Արագածոտնի փրկարարական վարչության պետ**
ՀՀ Արագածոտնի մարզի ԲԿ ղեկավարներ

Օ Ր Ա Կ Ա Ր Գ
ՀՀ Արագածոտնի մարզի խորհրդի նիստի

10.02.2015թ. **ժ. 11.00**

1. Գարնան գյուղատնտեսական աշխատանքների նախապատրաստման և կազմակերպման մասին /զեկ.՝ մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ Յու. ԱԶԱՏՅԱՆ/:
2. Մարզի համայնքներում ոռոգման ջրի տրման և սելավատարների մաքրման աշխատանքների նախապատրաստման մասին /զեկ.՝ մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ Յու. ԱԶԱՏՅԱՆ/:
3. Մարզի համայնքներում 2014 թվականի իրականացված վարչական վերահսկողության և կադրային գործի վարման ընթացքում հայտնաբերված խախտումների, թերությունների և բացթողումների, դրանց վերացման աշխատանքների մասին /զեկ. մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄՀ վարչության պետ Ս. ՀՈՎՍԵՓՅԱՆ/:

4. 2015 թվականին մարզի համայնքների բյուջեների կազմման գործընթացի, դրանք համապատասխան կայքերում տեղադրելու և հրապարակելու մասին /զեկ. մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ Ն. ԳԱԼՍՏՅԱՆ/:

5. Մարզի համայաներում խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների գործունեության մասին /զեկ. մարզպետարանի աշխատակազմի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի պետ՝ Գ. ԴԱՆԻԵԼԱՆ/:

6. Հայտարարություններ

Փետրվարի 10-ին կայացավ Արագածոտնի մարզխորհրդի նիստը: Բացման խոսքով հանդես եկավ Արագածոտնի մարզպետ Ս. Սահակյանը, այնուհետև խոսք տրվեց մարզպետարանի վարչության պետերին և համայնքների ղեկավարներին, որոնք ներկայացրեցին ընթացիկ աշխատանքներն ու մարզում առկա խնդիրները՝օրակարգի հարցերին համապատասխան:

Մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ Յ. Ազատյանը ներկայացրեց մարզի համայնքներում առկա առաջին հրատապության խնդիրները: Նա անդրադարձավ 2014-ին մարզում տեղադրված 5 հակակարկտային կայաններին, խոսեց դրանց արդյունավետության մասին և նախարար Երիցյանին խնդրեց, հնարավորության դեպքում, այս տարի կայանների տեղադրման քանակը հասցնել 20-ի: Մարզի առաջնային խնդիրների շարքում Ազատյանն առանձնացրեց համայնքային մաշված տեխնիկայի վերազինման, ոռոգման համակարգի բարելավման և սելավատարների մաքրման աշխատանքների նախապատրաստման ու կազմակերպման հարցերը: Մարզպետարանի աշխատակիցը շեշտեց, որ Քասախ գետի մաքրման աշխատանքների իրականացման, մի շարք քաղաքների և գյուղական համայնքների պոմպակայանների ու Ապարանի ջրամբարի վերանորոգման դեպքում մեծապես կբարելավվի մի շարք համայնքների ոռոգման համակարգը:

Մարզխորհրդի նիստի ընթացքում իրենց խնդիրներով կիսվեցին նաև մարզի որոշ համայնքների ղեկավարներ: Մասնավորապես՝ Կաթնաղբյուր համայնքի ղեկավարը նշեց, որ միայն տեխնիկական խնդիրների պատճառով համայնքում չի ոռոգվում շուրջ 123 հա հողատարածք: Նա մարզի մի քանի համայնքների ղեկավարների անունից բարձրացրեց գրեթե նույն խնդիրները, որոնք կապված են պոմպակայանների վերանորոգման, գազիֆիկացման, ոռոգման ջրով ապահովման, ամբարտակների ջրատարողության հուսալիության հետ և այլն:

Անդրադառնալով բարձրացված խնդիրներին՝ ՏԿԱԻ նախարար Արմեն Երիցյանը նշեց, որ հանրապետության տարածքում համայնքային խնդիրները գրեթե նույնն են, և մեծ աշխատանք է տարվում այդ խնդիրները շուտափույթ լուծելու ուղղությամբ: «Մենք լինելու ենք բոլոր գյուղերում անխտիր: Ծանոթանալու ենք խնդիրներին հենց տեղում և ձգտելու ենք տեղում լուծում տալ այն հարցերին, որոնք հնարավոր է լուծել այսօր, ավելի երկարաժամկետ լուծում պահանջող հարցերը կկարգավորվեն ժամանակի ընթացքում: Ես անձամբ կզեկուցեմ և՛ նախագահին, և՛ վարչապետին: Լինելու ենք ձեր կողքին, շատ անելիքներ ունենք միասին», - շեշտեց Ա. Երիցյանը:
Նախարարը հանձնարարեց նաև արծարծված հարցերի վերաբերյալ կազմել հստակ

հաշվետվություն, թե ինչ միջոցներ և ինչքան գումար է հարկավոր այդ խնդիրները լուծելու համար:

Մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄՀ վարչության պետ Ս. Հովսեփյանը ներկայացրեց օրակարգի հաջորդ հարցը, որը վերաբերում էր մարզի համայնքներում 2014-ին իրականացված վարչական վերահսկողության և կադրային գործի վարման ընթացքում հայտնաբերված խախտումներին, թերություններին ու բացթողումներին, ինչպես նաև՝ դրանց վերացման աշխատանքներին,:

2015 թ. մարզի համայնքների բյուջեի կազմման գործընթացին անդրադառնալով ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ Ն.Գալստյանը:Նա համայնքների ղեկավարների ուշադրությունը հրավիրեց գնումների գործընթացի կազմակերպման հարցերին և պատրաստակամություն հայտնեց աջակցել գործընթացը ճիշտ կազմակերպելու համար:Ն.Գալստյանը ներկայացրեց նաև հունվար ամսին հարկերի հավաքագրման տվյալները:

Համայնքների խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների գործունեությանն անդրադարձավ մարզպետարանի աշխատակազմի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի պետ՝ Գ. Դանիելյանը Նա առաջարկեց հանձնաժողովի կազմում ընդգրկել սոցիալական աշխատող-մասնագետներ , հաճախակի այցելել կարիքավոր ընտանիքներին,ուշադրության կենտրոնում պահել դժվար իրավիճակներում հայտնված երեխաներին:

Հայտարարություններով հանդես եկան ՀՀ առողջապահության նախարարության բժշկական օգնության քաղաքականության պետ Ծ.Վարդանյանը, ՀՀ Արագածոտնի մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ Ն.Գալստյանը,զորահավաքային նախապատրաստության բաժնի պետ Լ.Գրիգորյանը:

Նիստի ընթացքում բարձրացված հարցերին անդրադարձավ մարզպետ Սարգիս Սահակյանը: Նա նշեց, որ 2014-ը բավական դրժվար տարի էր մարզի համայնքների համար, քանի որ գրանցվել են ցրտահարության և կարկտահարության դեպքեր: Մարզպետը հայտնեց, որ համայնքներում արոտավայրերի բարելավման ծրագրերի ընդլայնումը քննարկվել է նաև գյուղատնտեսության նախարարության հետ: Նա հավելեց, որ շատ համայնքներ պատրաստ են նույնիսկ տեղական բյուջեի օգնությամբ լուծել համաֆինանսավորման խնդիրները: Միևնույն ժամանակ, մարզպետը նախարարին ներկայացրեց մարզի սեփական եկամուտների հավաքագրման արդյունավետությունը՝ նշելով, որ համայնքների ղեկավարների հետ համատեղ աշխատանքի արդյունքում այն 2014 թվականին կազմել է ավելի քան 103 %, ինչը աննախադեպ ցուցանիշ է:

Մարզխորհրդի նիստն ավարտվեց նախարար Ա.Երիցյանի ամփոփիչ ելույթով: Ընդհանուր առմամբ դրական գնահատելով մարզպետարանի գործունեությունը՝ նախարարն առաջարկեց շարունակել նույն ոգով և մեծ ուշադրություն դարձնել սահմանամերձ համայնքներին և համայնքային դպրոցների բարելավման աշխատանքներին: Նիստի ընթացքում բարձրացված հարցերի վերաբերյալ Ա.Երիցյանը նշեց ,որ խնդիրների լուծման համար անհրաժեշտ է ներկայացնել առաջարկություններ:

Ս.Սահակյան